

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
խաւարանի տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄԵԼԻ» ԼՐԱԳԻՐԸ

Մարտի 1-ից մինչև տարվայ վերջը կար-
ժենայ ինն ռուբլի:

Դիմել Тифлиς, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
մարտի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղորօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Ապրտիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Անցաւ մի ամիս.—Ներքին Տեսութիւն.
Նամակ Նոր-Բայազետից. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ Տեսութիւն. Պատերազմի շուրջը. Նա-
մակ Պարսկաստանից. Արաբիկ լուրեր. Հե-
ռոսիայից. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՄԻՐԱՅԻՆ. — Եւրոպական գրականութիւ-
նից:

ԱՆՑԱՐԱՐ ՄԻ ԱՄՍՈ

Լրացաւ մի ամիս այն օրից, երբ ա-
ռաջին անգամ դրոշակներ ռուսները Պարս-
կաստանի ամրութիւնների առաջ և ըսկա-
վեց ռուս-հայկական պատերազմը: Յուն-
վարի 27-ի առաւօտը մի ծանր օր էր,
որովհետև այդ օրը յայտնվեց, որ խաղաղ
ճանապարհով այլ ևս անկարելի է վճռել
այն խնդիրները, որոնք ծագել էին Ռու-
սաստանի և Եւրոպական մէջ Հեռաւոր-
Արեւելքում:

Զբոսելով այն հանգամանքին, որ
Ռուսաստանի և Եւրոպայի մէջ բանակ-
ցութիւնները ստացել էին սուր բնաւո-
րութիւն և մի քանի անգամ նոյն իսկ
լուրեր էին տարածվել պատերազմական
գործողութիւնների սկզբնաւորութեան մա-
սին, այնու ամենայնիւ դեռ մեծ յոյսեր
կային, որ պատերազմ չի սկսվի, կամ
դռնէ նա տեղի կունենայ զարման ամիս-
ներում: Նոյն իսկ այն հանգամանքը, որ
Եւրոպական յայտարարել էր իր յարաբե-
րութիւնները խզված Ռուսաստանի հետ,
դեռ չէր ընդունվում իբրև խաղաղու-
թեան վերջ և պատերազմի սկզբնաւորու-
թեան նշան: Սակայն յունվարի 26-ին, լոյս
27 գիշերը տեղի ունեցած եւրոպա-
կան յարձակումը Պարս-Արաբիկի նաւա-

հանգամանք և ուստի նաւատորմի վրա, մի-
անգամից դէն շարունակ ամեն տեսակ բա-
նակցութիւնների վրա գրած յոյսերը:

Մի ամիս անցել է, բայց կաւոյ կող-
մերի զօրքերը դեռ շատ հեռու են մի-
մեկանցից և կարող են ճակատադիմադրու-
թիւն համար միմեանց հանդիպել դեռ մի
ամիս էլ այսուհետև առաջ գնալուց յե-
տոյ: Զօրքերի շարժման խանգարում են
ոչ միայն ճանապարհները, այլ և շատ
ուրիշ հանգամանքներ: Զօրքերը պէտք է
առաջ ընթանան մեծ քանակութեամբ և
միևնոյն ժամանակ իրանց հետ սիւսային
պէտք է փոխադրեն ռազմագլխակա-
նութիւններ, թնդանութիւններ, ուստիսի պա-
շարներ, բժշկական օգնութեան պարա-
գաններ և ամեն տեսակ իրեր, որոնք կա-
րելու են բանակների կանոնաւոր գործո-
ղութիւնների համար:

Մովափերում, որտեղ անկասկած աւելի
հեշտ է նաւերով մերձենալու և յարձա-
կում գործելու կարելիութիւնը, արդէն
տեղի են ունեցել մի քանի դէպքեր, սա-
կայն նրանք փոքրամասն դեռ չեն կարող
կատարել, որովհետև պատերազմող կող-
մերի անհամաձայնութիւնները և թշնա-
մութիւնները առարկան ծովափերը չեն
եղել, այլ ցամաքի այնպիսի մեծ տարա-
ծութիւններ, ինչպէս են Մանջուրիան և
Կորէան իրանց բնական հարստութիւննե-
րով, առաւորական քաղաքներով և արդիւ-
նաւորութեամբ:

Ռուսաստանի ներքին նահանգներում
պատերազմը առաջ բերեց մի կողմից
հայրենասիրական զբաղմունքների բուռն
արտայայտութիւն, նաւերաւորութիւնների
մի ամբողջ հոսանք և կամաւորները մի մեծ
քաղաքների պատարաստականութիւնը գնա-
լու դէպքի պատերազմի դաշտը, իսկ միւս
կողմից բոլորային և զբաղմունքային շրջանե-
րում ընկճված և երկրաւոր տրամադրու-
թիւն, որի հետևանքն եղան արժեթղթերի
գնիւնի անկումը և սուտ լուրեր խնայողա-
կան զբաղմունքներում գնալու փողերի
մասին: Կատարելութիւնը անհրաժեշտ և
կարելու համարեց պաշտօնապէս հերքել
այդ սուտ լուրերը և հանգամանքները յուզ-
ված մտքերը: Վերջին օրերս նկատվում
է նոյն իսկ, որ արժեթղթերի գնիւնը ոչ
միայն այլ ևս չեն ընկնում, այլ և մի
փոքր չափով բարձրացել են: Պատերազմի
առջած ծանր և սարսափեցնող առաջին
տուգաւորութիւնը անցել է և մարդիկ ըն-

դունակ են դարձել աւելի սառն վերա-
բերվել դէպի յուզիչ լուրերը, չը կորցնել
իրանց գլուխները և աւելի են չը ծան-
րացնել այն դրութիւնը, որ բերում է
այնպիսի մեծ փորձութիւն, ինչպէս խո-
շոր պատերազմին է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՅ

Փետրվարի 10-ին

«Մեր պանդուխտները» խորագիր կրող յո-
ղաւորով «Մշակի» ներկայ փետրվարի № 16-ի
մէջ պ. Սինանեանցը ձգտում է համոզել, որ
մեր ժողովրդի անտեսական և նիւթական պաշ-
տանքները այնքան բարեկեցիկ են, որ նա կա-
տարելապէս ոչ մի առիթ չունի հայրենի յար-
կին ու ընտանեկան գրաւիչ իրիւրան թո-
ղած սարը սար ընկնել, գլուխը հազար բարով
տալ, թէ բարեկեցիկ և թէ ֆիզիքապէս առ-
ժեղով: Պ. Սինանեանցը շատ հեռու է իրական-
ութիւնից և այնքան լաւ ուսումնասիրած չէ
տեղիս ժողովրդի ընթացիկ կեանքի ելեւթ-
ները, որ վատասօրէն իրաւունք ունենայ ա-
ռաջարկել կարիքից օտարութիւն գնացող եր-
կրագործին.—Թողնել պանդուխտի ցուպը և
դիմել իր աւանդական գութանի մաճին: Ահա
թէ ինչու:

Վերջինով միմիայն Նոր-Բայազետը, որը
զուտ մի հողագործ քաղաք է, մենք տեսնում
ենք, որ հողը բաւարարութիւն չէ տալիս նրա
ընտելութեան, որը ժամանակի հետ շարունակ
աճում է, մինչդեռ շահագործվող արտերն ու
մարքերը մնում են իրանց նախկին սահմաննե-
րի մէջ: Այսպիսով, այն կտոր գետինը, որը
տանեակ տարիներ առաջ ծառայում էր մի-
միայն մի ընտանիքի պէտքերին, այժմ դա-
ռնել է մի քանիսի անփականութիւն, ուստի
մենք տեսնում ենք, որ մշակելու ընդունակ
ձեռքերը աւելի շատ են, քան իսկապէս պա-
հանջ կայ: Իր հերթին, նախկին հողը չէ կա-
րողանում բոլորին կերակրել:

Մեղաւորում այժմ սովորական երևոյթ է,
երբ հողագործը ստացած հացով կառավարվե-
լու հնար չունենալով փողով էլ է հաց գնում,
և յաճախ նոյն իսկ աղու անասունների հա-
մար: Մինչդեռ, եթէ հողագործութեան ար-
դիւնքը պահանջից անցնող լինէր, հողագործը
ոչ միայն պէտք է ունէր չը գնէր, այլ ընդհա-
կաւորով.—ծախել իր աշխատութեան բերքից:
Այժմ հացը է ծագում. ինչ հաշուով է կարո-
ղանում նա, առանց վերջնականապէս բայեջ-

վելու, այդ կերպ «հօյա» գնալ: Որովհայտ է
այն դուստրը, որով նա գնում է հացը, դար-
մանը, խոտը և այլն:

Պատասխանը պարզ է: Տարվայ ընթացքում
հազարից աւելի նոր անցաղիւր է պահանջվում
քաղաքային ինքնավարութիւնից: Մայրենի եր-
կրում ապահով ապրուստ ունենալու անձկու-
թիւնը ընդուն է նոր-բայազետցուն դէպքի թէ
մօտ և թէ հեռու: Վատակաշատ քաղաքնե-
րը.—Ինչ անէ նա, երբ «Իր շէմքի տառ» չէ
գտնում վատակ, երբ աշխատանքի առաքել-
ը իր երկրում օրէցօր աղմկում է, նօսրանում:
Վաճառականութիւնը Նոր-Բայազետում նա-
խանձելի վիճակի մէջ չէ, շնորհիւ աւելորդ
քան հարկաւոր է ֆիրմաների և նորից սկսվող
առևտրական գործերի: Արհեստաւորները մի-
մեկանց ձեռքից օրեկան հացն են խլում... Ա-
մեն տեղ նկատվում է գործի վատ, նիհար
կազմակերպութիւն: Ահա այսպիսի հանգա-
մանքների անհղ ճնշման տակ առաջ է գալիս
և պանդուխտութեան այն հոսանքը, որին ընդ-
դէմ է պ. Սինանեանցը:

Ո՞վ է ասում, որ հրապուրիչ է մեծ քաղաք-
ների աշխատաւորների կեանքը: Ո՞վ չը գիտէ,
որ պանդուխտ յաճախ զոհ է գնում այդ բա-
ղաքների ներքին կեանքի վատ հոսանքին, որ
նա յաճախ ձուլվում է այդտեղի տականքի
հետ, գործելով դէպքի հիւսման, այլապէս
անդունդը: Բայց ո՞ր է ելքը: Առանց ուսելու
ոչ ոք չէ կարող ասել:

Մենք կարող ենք շարունակ փառաբանել
գիւղը, թուել նրա վայելքները, օգը, առողջա-
բար շուրն ու կացութիւնը... երբ կուշտ
ենք: Ամեն մի հեռանկար նրանով է լաւ,
որ հեռու է մեզանից: Պանդուխտութեան
առաջ ոչ մի յորդոր չը կայ, քանի որ
նրա շարժիչը սոված որդիներ է: Թերեւ շատե-
րը օտարութեան մէջ մաշվող պանդուխտնե-
րից ախ են անում իրանց տան մրտա առա-
տաղի, մաճախի և կանաչ խոտերի համար:
Նրանք արդեօք արտասուր չեն բաժնում, երբ
մտաբերում են իրանց սիրտուն գաւազներին,
կնոջն ու մօրը...

Սակայն ձեռքերը ծալած, անօթի փորով
տանը նստելով և միմեանց երեսին նայելով
արդեօք շատ օգնած կը լինեն նրանք իրանց
նիւթական դժուար վիճակի բարեփոխման:—
Հարկաւ,—ոչ, Ուրեմն հարկաւոր է ոչ թէ
պանդուխտութիւնը դադարեցնելու անօգուտ խը-
րատներ կարգալ, այլ որոնել այն լաւիւնքով
ճանապարհը, որը կոչվում է անբարեկեցիկ
անտեսութեան բարելաւութիւն:

Տեղացի

ԲԱՆԱՄԻՐԱՅԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՐԻ ՏԱՐԻ

Իրական մի հոգ քաղաք

Այստեղ գտնւեալ աւելորդ չը լինէր մեր կող-
մից մի փոքրիկ փակագիր ըստալ: Շատերը
զիջում են նաւորաւորութիւնը: Զօրայի զարդը՝
նաւորաւորութիւնը: Բուհիլէ անհարկում է այդ
զիջութիւնը և բնորոշում երկու ուղղութիւն-
ները: Որպէս զի այդ բնորոշումը մեր ընթեր-
ցողներին աւելի պարզ լինի, մենք հարկ ենք
համարում աւելացնել մի քանի խօսք: Զօր և
իր հետևորդները աշխատում էին կեանքը,
կեանքի երկոյթները մեզ ցոյց տալ այնպէս,
ինչպէս որ են. նրանք աւելի լուսանկարիչ
էին, քան գեղարուեստագետ: Ոչ ոք ուրանում
էր, որ Զօր մի վիթխարի, հուժկու տաղանդ
էր, բայց այդ տաղանդի թոյլ կողմն այն էր,
որ նա մեզ նկարագրած սարսափելի կեանքի
տակ ընդհանարել չէր տալիս գեղեցիկ կեան-
քը, իդէալական կեանքը, որին պէտք է ձգ-
տել: Կամ, Բուհիլէի խօսքերով՝ ածուխի խա-
ւար զանգուածի մէջ թաղնված աղանդի
ցուրտը չէր շղթայում մեր աչքերին: Իսկա-
կան արուեստը, յաւիտենական գեղարուեստը
իրականի և իդէալականի մի խառնուրդ է:

Իրականութիւնը կէտ առ կէտ ընդօր-
նակելը, եթէ գեղարուեստ համարվէր, լու-
սանկարչութիւնը գեղարուեստի մի ճիւղը
կը լինէր: Պէտք է յիշել սակայն, որ
Զօր՝ կեանքի վերջին մասում փոխեց իր
հայեցակէտը և սկսեց գրել երեք Աւետարան-
ները:

Զօր.—շարունակում է Բուհիլէ.—որ մի
հիմնադր մարդ է, ժամանակակից մեծագոյն
գրողը, նկատի ունեցե՛ք, որ սկզբներում, իր
պարզած գրական տեսութիւնների մէջ, գե-
ղեցիկութեան ոչ մի տեղ չէ տուել երբեք: Նա
ասում էր, որ վէպը պէտք է ներկայացնէր
ուսումնասիրութիւն՝ իրականութեան, առեւե-
րով աշխարհի (monde apparent) մի ճշգրիտ
վերաբաւորում (reproduction): Նա՛ այդ ի-
րականութիւնը, այդ տեսանկի աշխարհը խո-
րապէս զննելու մասնագետութիւնը չունէր, նա
վերցնում էր նրան իր օգեղութիւններիցով, իր
ոսովութիւններիցով, իր հասարակ երեւոյթնե-
րով: Մի խօսքով նա կանգ էր առնում իրերի
մակերեւոյթի առաջ, թէպէտ նա գործերի
մէջ անդրադառնում է ամբողջ ներկայ մարդ-
կութիւնը:

Ըսել էս ասում եմ բոլորովին ուրիշ բան:
Ես սիրում եմ, որ իրականութիւնը միշտ իր
մէջ պարունակում է ինչ ոք գեղեցիկ ու վե-
րա: Բանաստեղծի իսկական կոչումը՝ այդ
թաղնված գեղեցկութիւնները երևան հանե-

լուն մէջ է կայանում: Թրինակ, այս ինչ որ-
նախըրը, այս ինչ երկրագործը, այս ինչ ար-
հեստաւորը, պ. Պիէս, պ. Ժան կամ պ. Ժաք,
անձնապէս, իբրև անհատ վերցնելով՝ անկա-
կած կարող ենք հաստատել, որ ինչպէս որ և
է անհատ՝ գեղեցիկ և անպիտան: Բայց, եթէ
մենք նրանց վերցնենք իրանց պաշտօնի, ի-
րանց արհեստի գործադրութեան մէջ, կը տես-
նենք, որ նրանք նոյնքան մեծ, նոյնքան գե-
ղեցիկ և նոյնքան օգտակար աշխատանք են
կատարում որքան նրանք, որոնց երգել են
ժամանակի բանաստեղծները: Ուրեմն աշ-
խարհի գեղեցկութիւնը ըմբռնելու, հասկնա-
լու համար պէտք է իրերը, երեւոյթները քննել
իրանց յարաբերութեան մէջ, մարդիկներին ի-
րանց յարաբերութեան մէջ. ոչ թէ նրանց մե-
կուսացնել, այլ ընդհանրաւորել, նրանց ընկե-
րականացնել (socialiser), տեսնել նրանց դե-
րը, ուսանի (cité) մէջ, պետութեան մէջ,
Այսպէս ասա՛ մենք կարող ենք հասնել տիե-
զերական գեղեցկութեան յղացումին:

Ճանախին բանաստեղծները, օրինակ Հովհ-
րոս, երգել են պատերազմիկները: Նրանք
պատերազմիկներին ցոյց են տուել գիւցադ-
նական, վսեմ: Լաւ. բայց ես խորհում եմ, որ
պէտք է այսօր երգել հաւասարապէս, արհես-
տաւորները, գործաւորները, կիները՝ իրանց
ընտանեկան յարկում, երկրագործները՝ իրանց
դաշտում և հասարակաց աղջիկները փողոցում,

որովհետև այդ բոլոր էակները մի օգտակա-
րութիւն ունեն, նրանք բոլորը՝ իրանց դերը
կատարելու համար, ենթարկված են մի ող-
բերական ճակատագրականութեան, նրանք
բոլորը՝ իրանց պարտականութեան կատարու-
մի համար, գործում են իրանց օրերի, իրանց
ժամանակի, իրանց կեանքի մի մասը նոյնպէս,
ինչպէս պատերազմիկները կամ ուրիշ գիւցադ-
նական հռչակված անձերը:

«Այս գաղափարները» որ մի առաջին հա-
յեացքով կարող են վերացական կամ տարօ-
րինակ երևալ, արտադրել են արդէն իրանց
հրաշալի պատգմները: Կան մեծ արձանագործ-
ներ, ինչպէս Կոնստանդին Մէծնի, ինչպէս
Ռօզեն, որոնք ապագայանելու վրա են, որ
ներկայ մարդը արժանի է քանակագործու-
թեամբ անմահանալու: Ռօզեն՝ պանդուխտ
խուճերի մէջ խոտացել է այսօրվայ սիրա-
հարներ և բանաստեղծների ամբողջ առա-
պանքը: Մէծնի մարմարի մէջ քանդակել է
հանրագործներին, նաւաստիների ողբերգական
տիպարները: Կան Գիւլեսով Շառպանտիէ,
Ալֆրէդ Բրիւնո, որոնք երաժշտական երգե-
րով արտայայտել են ամբողջ ժամանակա-
կից հոգին: Շառպանտիէ՛ պարիզեան փո-
րիկ գործաւորներին՝ Լուիլը նոյնքան հիմնա-
նի ձայնով է երգում, որքան Վոթանը կամ
Պարսիֆալը: Վերջապէս կայ և Զօր՝ որի
վերջին գործերը՝ Բեղմաւորութիւն և Աւա-

Տիգրան

Նիւ-Եօրկի լրագրիչներին մէկի թղթակցին հետեւեալը. «Այն ազգը, որի ներկայացուցիչն է եւ, բոլորովին չէ հասկանում, թէ ինչ պատճառով ամերիկական մամուլը այնպէս խիստ յարձակւում է Ռուսաստանի վրա: Ասում են, որ ամերիկացիները դժգոհ են նրանից, որ Ռուսաստանը հոկտեմբերին իր զօրքը դուրս չը հանեց Մանչուրիայից: Դրան կը պատասխանեմ. իմ կառավարութիւնը ներշնչված էր անկեղծ յոյսով, որ հանգամանքները թոյլ կը տան իրան հանել զօրքը որոշած ժամանակին, բայց այդ անհնարին եղաւ, որովհետեւ անհրաժեշտ էր առաջ ապահովել Ռուսաստանի շահերը Մանչուրիայում, մասնաւորապէս որ ամենքը ընդունում են, որ Ռուսաստանը գերակշիռ դիրք ունի այդ երկրում: Հէնց որ Ձինաստանը կը կարողանայ բոլոր միջոցները ձեռք առնել մեր արդար շահերի պաշտպանութեան համար, այն ժամանակ հրապարակութիւն կը լինի իրագործել մեր նախկին դիտաւորութիւնը»:

Ինչ ճան ունի Ամերիկայի Ամերիկայի բըռնած դիրքը, որ զարմանք է պատճառում ուս հասարակութեան և մամուլին, ունի իր պատմական պատճառները, որոնց բացատրութիւնը տալիս է մեզ ուստաց լուրջ թերթերից մինը:

Մենք գիտենք հեռագրիչներին, որ բոլոր մեծ պետութիւնները, բացի Անգլիայից և Ամերիկայից, յայտնեցին ուստաց կառավարութեան, թէ պատերազմի ծագման պատասխանատուութիւնը ամբողջովին ընկնում է Նապոլիոնի վրա և եւրոպացիներին գործողութիւնները կազմում են միջազգային իրաւունքի խախտում: Ուրեմն, Անգլիան և Ամերիկան, չը միանայով այդ յայտարարութեան, դրանով իրենց համակրութիւն են յայտնում Նապոլիոնի և խոստովանում, որ նա, Նապոլիոն, ստիպւած է եղել այդպիսի ծանր քայլ առնել և իրաւունքը նրա կողմն է: Մի և նոյն ժամանակ Անգլիան և Ամերիկան ցոյց են տալիս, որ իրենց շահերը Հեռաւոր Արեւելքում բոլորովին տարբեր են, քան ֆրանսիական պետութիւնների շահերը: Այդպէս մտածում են և այդ երկու երկրների մամուլը և հասարակութիւնը:

Որ Անգլիան իր շահերով, իր քաղաքականութեամբ Ռուսաստանին հակառակորդ է ճանաչում իրան և այդպէս էլ է, որովհետեւ Ամերիկայի վերաբերմամբ ունեցած իր քաղաքական շահերը, ինչպէս այդ բացատրել են անգլիացի նշանաւոր հրապարակաբան-գործիչներ՝ Կէրզոն, Նորման, Կրաւսոն, Բերեսֆորդ, բոլորովին հակասում են Ռուսաստանի շահերին, այդ հանրածանօթ իրողութիւն է: «Ռուսական առաջխաղացութիւնը Ասիայում» (Russian advance in Asia) վարդաց անգլիական կառավարութեան և գործիչների մտահոգութեան առարկան է դարձել: Սակայն ինչպէս Ամերիկայի Միացեալ-Նահանգների շահերը պէտք է հակադրել իրենց Ռուսաստանի շահերին: Չէ որ դեռ վերջերս շարունակ խօսում էին, թէ Ռուսաստանը և Ամերիկան իրար բարեկամ են: Կէն որ դեռ 1860 թուականներին Ռուսաստանը շատ էօրան գնով զինեց Միացեալ-Նահանգներին բոլոր իր ամերիկական տիրապետութիւնները:

Սակայն ի՞նչ ուշ ուշով ուսումնասիրենք Նապոլիոնի և Ամերիկայի յարաբերութիւնները, մենք կը համոզվենք, որ Ամերիկան պէտք է համակրէ Նապոլիոնին: Այդ համակրութեան պատճառը դարձեալ առևտրական և տնտեսական շահերն են: Քրիստոնեայ պետութիւնների մէջ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը առաջինն էր, որ XIX դարում առևտրական դաշնագրի կնքեց Նապոլիոնի հետ: Այսօր Միացեալ-Նահանգների առևտրական փոխանակութիւնը Նապոլիոնի հետ կազմում է սրբ բոլոր առևտրական գործառնութիւնների 1/4-ը (500 միլիոն ինչից—մօտ 120 միլիոն ինչ): Նապոլիոնից ապրանք արտահանելու գործում՝ Ամերիկայի առաջին տեղն է զբաղում. Նապոլիոնի բաց թողած մետաքսից 2/3 մասը Ամերիկա է գնում, թէյինը—3/4 մասը, 1/4 մետաքսէ կերպանները, 1/4 բրինձը և մօտ 400 յալանապակէ գործերը Միւս կողմից Նապոլիոն մօտ ավելի 950/0-ը Ամերիկան է տալիս, կերօսիին—760/0-ը, և այլն:

Պարզ է, որ Նապոլիոնի առանձին շահաւետութիւն ունի Ամերիկայի համար, հետեւաբար նրա համակրութիւնը հասկանալի է:

Շուկայից Տօգօի քննդատակութիւնը: Վիէնայի «Neue Freie Presse» լրագրիչը, ընկերով Նապոլիոնի գործողութիւնները Պօրտ-Արտուրի դէմ, նկատում է, որ ծովապետ Տօգօի ամենամեծ զգուշութիւն էր բանեցնում: Իր բոլոր ձեռնարկութիւնները նա կատարում էր

ականանաւերի միջոցով. թանգ արժող գրանաւերը նա խնամքով պահպանում էր և չէր ենթարկում ուստաց բատարէաների հարուածներին, որովհետեւ ամեն մի աշող ձգված ուստ հեշտութեամբ կարող էր խորտակել միլիոններ արժող հալաչ-հաւը:

Անգլիան սպառազինվում է: «Times» լրագրիչը հաղորդում է, որ անգլիական կառավարութիւնը խաղաղ-ովկանեան երկաթուղային ընկերութեան հետ կանաղալում պայմանագիր է կապել, որի հիման վրա ընկերութիւնը անգլիական զօրքերի շուտափոխ աւարտումը արեւելեան Սիւրա ապահովված է, ի պահանջի հարկին:

Փետրվարի 17-ին անգլիական ստորին պարլամենտը 277 ձայներով ընդդէմ 87-ի, ընդունեց կառավարութեան առաջարկը՝ անգլիական հաւատարմութեան ուստացնելու մասին: Վիճարանութիւններին մասնակցեց ինքը միւստար նախագահ Բալֆուրը. նա յայտնեց, որ պարլամենտը, պահանջված կրեկտը ընկնելով, պէտք է ի նկատի ունենայ ոչ միայն նրանց չափսը, այլ և գործերի ընդհանուր գրութիւնը Եւրոպայում և Ասիայում: Անգլիական ծովային միւստարութիւնը, ասաց նա, մի գլխաւոր հոգս է ունեցել միշտ. այդ այն է, որ անգլիական հաւատարմութեան պէտք է միշտ հաւատարմ լինի եւրոպական ամեն երկու պետութիւնների հաւատարմին: Ես համոզված եմ, որ եթէ պարլամենտը թոյլատրէ խնդրած կրեկտը, ամբողջ երկիրը իր կողմն կունենայ: Ներկայումս հիմք չը կայ վախճալ պատերազմից, բայց միշտ պէտք է ի նկատի ունենալ պատերազմաւորութիւնները:

ՆԱՍՏԱՅ ՊԵՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, փետրվարի 12-ին

Գարնան մօտենալը առիթ է տալիս մեզ խօսելու Սալմաստի տնտեսութեան մասին: Ով երբ և իցէ տեսել է Սալմաստի ընդարձակ հարթավայրը գարնան կամ ամառ ժամանակ, ով երբ և իցէ հետաքրքրվել է սալմաստեցու տնտեսական գրութեամբ, նա անշուշտ մօտաւորապէս եկել է այն համոզման, որ սալմաստեցին ծոյլ է, անաշխատասէր, որ նա չէ հետաքրքրվում հողով, գիւղատնտեսութեամբ, այլ վազում է աւելի հեշտ աշխատանքի յետեից:

Սալմաստի հողը աչքի է ընկնում իր բարեբերութեամբ. ընդհանրապէս վերջում մէկն ստացվում է ոչ պակաս քան ութ, բայց ինչ արած, որ ինչ կողմ որ գնում են, ուր որ հայեացքը շրջում են, անմշակ հարթ տարածութիւն է աչքի գրանվում մի քանի ուստիներով: Չը կան կանոնաւոր շահաւէտ այգիներ, չը կան թփերի պլանտացիաներ, չը կան ընդարձակ անտառներ, ամեն տեղ հատ ու կտոր ուստիներ, մի երկու պտղատու ծառերով այգիներ և ուրիշ ոչինչ:

Երեւակայեցէ, որ ընդհանուր առմամբ, օրինակ Հաֆթուան գիւղում, իւրաքանչիւր տուն ունի մէկ և կէս դեհատարի հող, դեռ չեմ ասում, որ կան մարդիկ, որոնք ունեն տասնեւհինգ և դեռ աւելի դեհատարի հողեր, բայց ոչինչ արդիւնք չեն ստանում: Հողատերերը ընդհանրապէս ցորեն են ցանում, միակ արդիւնքը, որ ստանում են հողից, բայց, դժարաբար, ցանել, հնձել, ծեծելն էլ այնքան ծախքեր ունեն, որ ամենայն հասում տասնեւթեամբ կարող ենք ասել, որ ցորենի գուտ օգուտը չէ անցնում 20/0-ից:

Շատերը սկսել են բարդի ծառի անտառներ անկել, բայց որքան մենք գիտենք, այդ անտառներն էլ շատ քիչ օգուտ ունեն. ջրի սակաւութիւնը և—ինչպէս այստեղ ընդունված է—խիտ անկելը անտառի հասունանալը յետաձգում են աւելի քան 20—30 տարով. իսկ մինչև այդ ժամանակ շատ ծառեր փչանում են և դուր տեղից թէ հողն է պարսպ ֆնտմ: Թէ հողատիրոջ լուսերին են գուր կորչում: Սալմաստի հողում ան ածում են հետեւալ ծառերը՝ ծիրան, տանձ, սերկիւլ, դեղձ, թուփ, խնձոր, սալոր, կեռաս, նուշ և այլն, բայց ոչ մի տեղ չէր գտնի մի այդի, որտեղ տնկված լինէն մէկ ու մէկ տեսակի պտուղներ:

Մեր մասնաւոր արած փորձերից երեաց, որ շերմապահութիւնը մեծ աշողութիւն կարող է ունենալ այստեղ. մէկ մասնից ստացանք (բաղադրի սերմ) մէկ պուդ երկու ֆունտ թաց հեղուկ որդիներ:

Միւսայինները 5-6 տարում հասնում են այստեղ և շատ լաւ չին են տալիս, նոյնպէս և միւս պտուղները, բայց ինչ արած, որ պարագոյնը չը կան. ով մի փոքր մեծանում է,

շուտապէս է պահպանութեան դաւադանը ձեռք առնել և դնալ օտար երկրներում հեշտ ճանապարհներով փող վաստակել, իսկ գիտէ՞ք, նա բացի փողից որքան վատ բաներ էլ է վաստակում...

Փետրվարի 6-ին Ղալասարում ուսուցիչները և սիրողները խաղացին Վ. Փափազեանի «Արշալոյս» դրաման. ընդհանրապէս բոլորն էլ շատ աշող էին իրանց գերերում: Դանիճը ծայրէ ի ծայր լինէ էր հասարակութեամբ:

Յովհ. Պետրոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիայում սկսել էին եկեղեցիներում առանձին մաղթանքներ կատարել եւրոպացիներին աշողութեան համար, բայց Եօրկի արքեպիսկոպոսը չը թոյլատրեց, այլ յանձնարարեց աղօթել ընդհանրապէս խաղաղութեան և բոլոր ազգերի համաձայնութեան համար:

—Լոնդոնից հեռագրում են, թէ Կ. Պօլսից տեղեկութիւն է ստացվել բոլորովին արժանաւատ աղբիւրից, որ Թիւրքիան ամբողջում է Դարդանէլին և ականներ է դնում նրա մէջ:

—Պետերբուրգից գրում են Պարիզի «Liberte» լրագրին, թէ անգլիական կառավարութիւնը հաւատարմացրել է, որ անգլիական արշաւախումբը շուտով կը թողնէ Տիբեթը: Այդ հաւատարմացումը լաւ ժամանակին հասաւ, ասում է լրագրիչը, որովհետեւ եթէ այդ արշաւախումբը երկարացնէ իր ֆիւրը Տիբեթում, Ռուսաստանը կը ձեռնարկէր անմիջապէս գրաւել Թիւրքեստանը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

25 փետրվարի

Կ. ՊՈԼԻՍ: Բաղադրում խօշրայի հինգ դէպք է եղել: Իրեղ-Քիտիւում, ըստ երեւոյթին, դիմաբութիւն են ցոյց տալիս ծանդարմիւրայի վերադարձութեան վերաբերեալ որոշումներին: Դաշնագրված պետութիւնները յամաձայնութեամբ կը պնդեն, որպէս զի ընդունվին իրանց մշակած որոշումները, որոնք ընթացիկ միւրց-շտէգեան ծրագրի գլխաւոր հիմունքներն են կազմում:

ՏՕԿԻՐ: («Րէյտ. գործ»): Պէկինի ուստաց դեսպանը ծանուցեց չինական կառավարութեան, որ եթէ հեռագրական թերթը կտրտող և մանշուրական ճանապարհը փչացնող հեծեալ աւաղակախմբերի աւերմունքները չը դադարեն, այն ժամանակ Ձինաստանի յայտարարած չեզոքութիւնը իսկական չի համարվի:

ՏՕԿԻՐ: («Վօլֆի գործ»): Նապոլիոնի կառավարութիւնը յայտարարեց մանրամասն առարկութիւն կոմս Լամարգի շրջաբերական յայտարարի դէմ փետրվարի 9-ից: Նա յայտնում է, որ ներկայ վայրկեանում նա հիմունքներ չունի բացատրութիւնների մէջ մտնելու ուստաց կառավարութեան կարծիքներին և յայտարարութիւններին վերաբերմամբ, բայց նա իր իրաւունքը և պարտաւորութիւնն է համարում անձիւր պատմված փաստերը կանոնաւոր լուսարանութեամբ ներկայացնելու: Այս եւրոպական կառավարութիւնը ուղղում է կոմս Լամարգի յայտարարի բոլոր հինգ կէտերը: Առաջին կէտի մէջ մատնացոյց է անվում, որ թէպէտ զօրքերի ափ իջնալը Կօրէյում տեղի ունեցաւ մինչև պատերազմի յայտարարումը, սակայն Կօրէյական կառավարութեան համաձայնութեամբ, երկրորդ կէտի մէջ անձիւր են յայտարարվում հեռագրական հաղորդակցութեան վերաբերեալ պնդումները. արդէն յունվարի 26-ին սկսեց գործադրվել պատերազմական գրութիւնը և Չէմուլպոն այն ժամանակ չէր ղարդ նաւանադիւտ չէր. երրորդ կէտը վերաբերվում է առևտրական նաւերի գրաւման. Նապոլիոն հիմնեց կօնտրաբանդական նաւերի դատարան, այդ պատճառով այդ գրաւման վերաբերեալ բոլոր մեղադրանքներն անհիմն են. 4 կէտի մէջ հերքվում է համապատասխան պնդումն, որպէս կատարեալ հակառակութիւն փաստերի: Կինդերթը կէտի մէջ ասված է, որ Նապոլիոնի արած յանդիմանութիւնը գուր է որ և է հիմքից և հակասում է անցյալի իրական ընթացքին.—Մուլի ուստական դեսպանը ճանապարհ ընկաւ իր կամբով:

ԽԱՐԻՐԻ: (Սեփական թղթակցից): 12-ից մինչև 15 աստիճան սառնամանիքներ են: Ձիւնացիները նրանց դիպլոմատիական ընդունելի յայտարարութիւններից յետոյ հանգստացան և յօժարութեամբ աշխատում են: Ռուսական ազգաբնակչութեան մէջ հայրենասիրական մեծ ոգևորութիւն է տիրում: Նուրբաւորութիւնները աստաւ են: Կրէյսէնքեր գնելու համար մի խմբագրութիւն երկու հազար բուրդուց ամ

ւելի հաւաքեց: Կարմիր Խաչը մեծ եռանդով աշխատում է: Հասարակական կօմիտէներ անցնող զինուորական ընտանիքներին տալիս է կերակուր, հագուստ և փող: Խարբիւսում վաճառական Պօպով իր միջոցներով հիւանդանոց բացեց՝ հիւանդներին ձրաբար ընդունելու համար: Այսօր եկան Նալուի մօտ գերի բրնձված եւրոպացիները:

26 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԻ: Կօրմարի ուստական փոխհիւպատոսի հեռագիրը փետրվարի 23-ից. «Անգլիական «Ամֆիտրիպա» նաւով եկած «Վարեագի» ուստ օֆիցերներին և 362 նաւատիրներին անգլիական իշխանութիւնները վերաբերվում են մեծ ուղադրութեամբ և հոգածութեամբ: «Ամֆիտրիպա» նաւի հրամանատարը յանձնարարական նամակ տուեց 2-րդ կարգի կապիտան Ստեպանովին Յէյլօնի նաւահապետին յանձնելու: Ստացված կարգադրութիւնների համաձայն, մեր նաւատիրները երէկ երեկոյան առանց որ և է ձեռնադրութիւնների փոխադրվեցին ուստական «Մալալա» շոգենաւը, որը պատկանում է արեւելեան ասիական ընկերութեան, որի ժամանակ դիմաւորվեցին «ուրայի» բարձրագոյն աղադակներով: «Մալալան» փետրվարի 24-ին ուղեւորվում է Օդեսսա:

ՍՕՖԻԱ: Անգլիայի շրջաններից): Կ. Պօլսից հաղորդում են, որ պետութիւնների դեսպանները, որոնք ընթացիկ ծրագրի են մշակել Բ. Դրան համար, որը պէտք է անմիջապէս համաձայնվի այդ վիճիւնների հետ, եթէ ոչ պատասխանատուութիւնը կընկնի նրա վրա: Դիպլոմատիական շրջանները ենթադրում են, որ թէ և Մակեդոնիայում կարող են երևան գալ դժգոհների փոքր չեւանք, ազգաբնակչութիւնը կը ֆիւրալը, սպասելով ընթացիկների բարեկամ իտալեանքներին:

ՆԻՒԵՐՈՒԿ: Մի քանի նահանգներում, մասնաւոր Պէնսիլվանիայում, ջրերի հեղեղումները պատճառեցին խոշոր աւերումներ: Երկաթուղային յարաբերութիւնը դադարել է:

ԼՕՆԻՐՕՆ: Անգլիական համարեն ամբողջ մասով ծայրայեղ թշնամական վերաբերմունքը դէպի Ռուսաստանը շատ անհանգստացնում է այստեղի արաբներ գործերի միւստարութեանը. նա այդ առիթով հրատարակեց մի հետաքրքիր նախազգուշացում՝ կիսապաշտօնական առաջնորդող յորուածի ձևով՝ որի մէջ լրագրիչներին ցոյց է արվում գերեզմանական և ֆրանսիական մամուլի իբրեւ օրինակ, որին արժէ հետեւել:

ՇԱՆԴՆԱՅ: Իբր թէ եւրոպական բանակը ափ կը հանվի Պօրտ-Արտուրի և Նալուի միջև, իսկ նրանց մի ուրիշ բանակը կը գրաւէ Նիւ-Չիտանը, հէնց որ Լեւոն ազաւովի ստուցից:

ԿՕՊԵՆՀԱՅԻՆ: Դանիական թագաւորի մօտ օրերս լրացող ծննդեան 86 ամեակին սպասվում են անգլիական թագաւորն ու թագուհին:

ՍԵՆՈՒ: (Րէյտ. գործ): Կօրէյում լուրջ ընդհարումներ չէ կարելի սպասել 3—4 շաբաթից աւելի առաջ:

ՏՕԿԻՐ: (Րէյտ. գործ): Նապոլիոնի պատերազմական նաւերը մի քիչ ուղեւորեցին Տալինվանի ամրութիւնները, իսկ դրանից յետոյ յարձակում գործեցին Պօրտ-Արտուրի վրա:—Կօրէյական զօրքերը Ան-Չիտի մօտերը ուստներին միայն թոյլ դիմադրութիւն ցոյց տուին:—Այստեղ շատ հաւանական են համարում, որ եւրոպական էսկադրան, որ գնացել է դէպի Վալդիօստոսի, պատահել է ուստական նաւերի Պօսիէի ծոցում:

ՍՕՐԻՐԻՐԻՆ: (Օհիօի նահանգ): Սպիտակները Վինչի օրէնքով դատեցին մի նեգրի, որը մեղադրվում էր մի սպիտակ կին սպանելու մէջ: 2,000-ի չափ սպիտակներ ներս խուժեցին նեգրների թաղը ատրճառակներով և կերոններով և կրակ տուին աները: Ուղարկված է 8 հարիւրեակ միլիցիա: Հրդեհը ոչնչացրեց 20 տուն: Զօրքերն արգելեցին դալիք անկարգութիւններ:

ՊՕԼԻՍ: Միտրօվիցայից եկած լուրի համաձայն, Շէմսի փաշան հեռացված է հրամանատարութիւնից, և այդպիսով կատարված է դժգոհ արաբացիների պահանջը: Միւս պահանջները մասին բանակցութիւններ են տեղի ունենում:

26 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԻ: Բարձրագոյն հրովարտակով հրամայված է ժամանակաւորապէս, մինչև առանձին կարգադրութիւն, արգելիլ ձիւրի արտահանութիւնը Ռուսական կայսրութեան սահմաններից:—Հնձնելու ձիւրի առաջին համառուական ցուցահանդէսը, որ մտադրու է թիւն կայ բանալ Պետերբուրգում մայիսին:
